

ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Ֆիրթի տօնին առիթով եւ համաձայն մամլոյ սենտիքայի որոշումին, «Ազդակ» լոյս պիտի չտեսնէ Ուրբաթ 6 եւ Շաբաթ 7 Դեկտեմբերին: Մեր յաջորդ թիւը՝ Երկուշաբթի, 9 Դեկտեմբերին:

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE 1500 Լ.Ո. 75ԻԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 226 (21276) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 5 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2002 10 ԷԶ

Golden fish RESTAURANT AZAD. Մովայիմ ամէմ տեսակ բար ուտելիքներու մտ ըստոմմ քաղաք, յատուկ պատրաստութեամբ՝ հորաքանչիւր անձի 20,000 Լ.Ո. ԷՄ սկսեալ: Tabarja, ancienne route Cell. (03) 200438, Tél. (09) 853040

ՆԱԽԱԳԱԿ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏ ԿԸ ՇՆՈՐՀԱԴՈՐԷ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐԸ ՖԻԹՐԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ Ֆիրթի տօնին առիթով երէկ շնորհաւորեց լիբանանցիները, մասնաւորաբար՝ իսլամները, մաղթելով բարօրութիւն եւ մտահոգութիւններու փարատում յատկապէս շրջանի մը մէջ, որ կը յատկանշուի բռնազարուած հողերու պատահաբարութեամբ, վերանորոգումի ընթացքի մէջ գտնուող տնտեսական դրութեամբ եւ շրջանային ու միջազգային մակարդակներու վրայ Լիբանանի վերըստացած կարեւոր ու ուշագրաւ դիրքով:

Նախագահ Լահուտ ընդգծեց Ֆիրթի տօնին պուզադիպութիւնը Ս. Ծննդեան տօնին եւ պայն առիթ նկատեց լիբանանցի իսլամ եւ քրիստոնէայ համայնքներու պառակներուն միջեւ գոյատեւող միասնականութեան եւ օրինակելի երկխօսութեան, որ գոյատեւման հիմնական աղբիւր մըն է ժողովուրդներուն եւ հայրենիքներուն:

Այս առիթով, նախագահ Լահուտ արարական ձեռն բաղաւ:

ՁԵՆՍ ԲԱՊՊԱՆԻ. ԽԱՓԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՊ ՉՈՒՆԻ ԸՈՂԱՅԻՆ ԸԱՐՅԵՐՈՒ ԸՏԵ

«ՆԵՊԻ ԱԶԻԶ» ՍՐԲԱՏԵՂԻՒՆ ԴԷՄ՝ ԽԱՓԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, 3 Դեկտեմբերի երեկոյեան Այնճարի մօտերը գտնուող «Նեպի Ազիզ» սրբատեղիին դէմ գործադրուեցաւ խափանարարական արարք մը:

Արդարեւ, անծանօթներու կողմէ լարուած ական մը պայթեցաւ սրբատեղիին մէջ՝ քարուքանդ ընելով զայն:

Երէկ առաւօտ Պար էլիսահի Տար էլ Ֆաթուային մէջ գումարուեցաւ արտակարգ ժողով մը, զիստուրուեցաւ Պեքաայի եւ Ջահլէի միջոցով շէյխ Նալիլ Մէյսի, եւ մասնակցութեամբ շէյխերու, քաղաքական անձնաւորութիւններու, քաղաքապետներու եւ թաղապետներու:

Ժողովը հրապարակեց հաղորդագրութիւն մը եւ դատապարտեց խափանարարութիւնը՝ զարմանք յայտնելով, որ անիկա անհախառնօրէն է Լիբանանի եւ Պեքաայի պատմութեան մէջ:

Հաղորդագրութիւնը շեշտեց, որ խափանարարութիւնը կը հարուածէ Լիբանանի միասնականութիւնը եւ կը հրահրէ միջամտման անհրաժեշտութիւնը: Ժողովականները ապահովական իշխանութիւններէն պահանջեցին երեւան հանել ոճրագործները եւ զանոնք խտրելու պատժել:

Միւս կողմէ, հանրապետութեան միջոցով շէյխ Մուհամէտ Ռաշիտ Քապպանի կապուեցաւ նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտի հետ, որ դատապարտեց որեւէ խափանարարութիւն կրօնական կեդրոններու դէմ:

Շէյխ Քապպանի շեշտեց, որ այս խափանարարութիւնը կապ չունի հողային հարցերու հետ: «Լուռ պիտի չմնանք, սակայն պիտի ձախողին մեզ գրգռութիւններու հոսանքին մէջ ջրելու փորձերը», ըսաւ ան:

ՂԱՏԱՊԱՐՈՒՄ

Այնճարի բնակչութիւնը հրապարակուած հաղորդագրութեամբ մը դատապարտեց խափանարարութիւնը եւ նկատել տուաւ, որ պիտի ձախողին ապահովութիւնը ապակայունացնելու, Ազգային միասնականութիւնը քանդելու եւ համերաշխ գոյակցութիւնը խանգարելու բոլոր փորձերը:

Հաղորդագրութիւնը ապահովական իշխանութիւններէն պահանջեց ոճրագործները յայտնաբերել ու պատժել:

Երեսփոխան Ճորճ Գասարճի հաղորդագրութեամբ մը դատապարտեց ոճիրը եւ նշեց, որ Պեքաայի բոլոր

աշխարհի ղեկավարներուն յղեց հեռագիրներ՝ շնորհաւորելով տօնը եւ ժողովուրդներուն մաղթելով բարգաւաճում եւ կայունութիւն: Նախագահ Լահուտի հեռագիրներուն մէջ յիշուեցաւ նաեւ Լիբանանի նախանձախնդրութիւնը՝ արարական բոլոր երկիրներուն հետ երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդման:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրին, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային կարգաւորումները, ինչպէս նաեւ տնտեսական կացութիւնն ու խորհրդարանին դերը՝ գործադրելու տնտեսական բարգաւաճման հետ որդեգրուած միջոցառումները:

Պըրրի մէկ ժամ տեւողութեամբ հանդիպումն էտք մերժեց յայտարարութիւններ կատարել:

Նախագահ Լահուտի այցելեց նախկին վարչապետ Օմար Քարամէ: Քննարկուեցան լիբանանեան բեմը յուլոյող հարցեր, ինչպէս նաեւ Թրիփոլիի եւ հիւսիսի կարիքները:

Նախագահական պալատի հիւրերէն եղան նաեւ ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուժ, պետական անվտանգութեան ընդհանուր տնօրէն Էտուար Մանսուր եւ բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն ԿՕՐ. Ռեմոն Ալար:

Նախագահ Լահուտ երէկ Ֆիրթի տօնին առիթով ստացաւ շնորհաւորական հեռագիրներ Լիպիլոյ նախագահ Մուամմար Քապպանիէն եւ Մարիտանիոյ նախագահ Մուուիշյա Աիւիտ Թալիէն:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԲՈՂՈՔԸ «ԵՌԻՆԵՍՔՕ»Ի ԸՆԳՆԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆԻՆ

Ազգայնացի եւ Նոր Նախիջեւանի մէջ հայկական պատմական խաչքարերու փեցցումից դէմ իբրեւ բողոք, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս հետեւեալ նամակը յղեց «ԵՌԻՆԵՍՔՕ» ընդհանուր տնօրէն Գուշի Մացուրայիին:

Իրանի մեր թեմակալ իշխանութիւններէն խոր մտահոգութեամբ կ'իմանանք վրդովեալ այն լուրերը, որոնք կը վերաբերին բարբարոսութեան արարքներուն, որոնք կ'ենթարկուին հայկական կոթողները:

Արդարեւ, Նախիջեւանի մէջ գտնուող պատմական Ջուլֆա քաղաքին քանի մը հարիւր տարուան գերեզմանատունը ներկայիս կ'ենթարկուի սխաբեմարի քանդումի՝ ոչնչացնելու համար այդ շրջանին մէջ հայկական պատմական ներկայութեան ճարտարագետական վկանները:

Գերեզմանատան Հոգիւի մատուցող արդէն իսկ հիմնադրական կործանած է, հարիւրաւոր սքանչելի խաչքարեր կոտորուած են, անփոխարինելի արձանագրութիւններ վերջնականապէս կոտորուած են եւ գերեզմաններ՝ սրբապղծուած:

20րդ դարու սկիզբը գերեզմանատունը 12 հազար խաչքար կը հաշուէր,

իսկ դարու վերջաւորութեան դժբախտաբար անոնցմէ միայն 2 հազար կը մնար Ազգայնացի իշխանութիւններուն հետեւողական քանդումի քաղաքականութեան պատճառով: Քանի մը տարի առաջ, «ԵՌԻՆԵՍՔՕ» ուժգին եւ քաջութեամբ միջամտած էր՝ վերջ տալու համար համաշխարհային մշակոյթի գոհարներու անհերելի այս քանդումին:

Անընդունելի է, որ հայկական մշակութային ժառանգին դէմ այս ոճիրը շարունակուի, մինչ միջազգային համայնքը եւ մանաւանդ «ԵՌԻՆԵՍՔՕ»-ն անտարբեր մնան:

Այդ կոթողները, որոնք ստեղծուած են 12րդէն 17րդ դարերու միջեւ մարդոց կողմէ՝ իբրեւ հաւատքի վկայութիւն եւ Աստուծոյ փառաբանութեան վկայարան, չեն կրնար ոչնչանալ մեզ պակաս լուրջութեան մը մէջ: Ատիկա պիտի նշանակէ աղքատացնել համաշխարհային մշակութային ժառանգը:

Մեծ յոյսեր կը դնեմ «ԵՌԻՆԵՍՔՕ»-ի նման կազմակերպութեան մը վրայ: Կիլիկիոյ կաթողիկոսութեան աշխարհացորի հաւատացեալներուն անուշով ձեռքի կը դիմեմ, որ չզլանաք ձեր միջամտութիւնը՝ քանի տակաւին ուշ չէ, որպէսզի Ջուլֆայի անգուցական խաչքարերէն միայն գիրքերու մէջ լուսանկարներ եւ գծագրութիւններ չմնան:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԶՂԱԳՐԳԻՌ ՎԻՃԱԿ ՈՒՆԻՆ ԻՐԱՔԻ ԶԷՆՔԻ ՔՆՆՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Մինչ ՄԱԿի քննիչները քննութիւններ կը կատարէին Իրաքի կորիպային ուժանիւթի գլխաւոր կեդրոնին մէջ, Միացեալ Նահանգներ կը պահանջէին աւելի խիստ ու յարձակողական մօտեցում՝ բացալայտելու համար Պաղտատի կենսաբանական, քիմիական ու կորիպային պէնթրոն ծրագիրները:

Հիւլէական Ուժանիւթի Միջազգային Գործակալութենէն մասնագետներ երէկ այցելեցին Թուլէթայ գործարանը,

որ կը գտնուի մայրաքաղաք Պաղտատին 20 քմ. դէպի հարաւ: Թուլէթայի կորիպային հետապօսութիւններու կեդրոնը անցեալին ենթակալ էր միջազգային գործակալութեան հսկողութեան: 1998ին ի վեր, քանի մը թոն ուրանիում «կղպուած» կը պահուի միջազգային գործակալութեան հրահանգով:

ԱՄՆՈՎԻՔԻ քննիչները իրենց կարգին քննութեան ենթարկեցին Պաղտատին 75 քմ. հիւսիս գտնուող Մուրանա-

յի պինտորական կեդրոնը, ուր ենթադրաբար անցեալին արտադրուած են քիմիական ու կենսաբանական պէնթրոն: Քննութեան արտօսին, քննիչները յայտարարութիւն չկատարեցին:

Մինչ այդ, Միացեալ Նահանգներ կոչ ուղղեցին ԱՄՆՈՎԻՔԻ գլխաւոր քննիչ Հանս Պիքսի՝ աւելի խիստ ու յարձակողական բնոյթ տալու քննու

Շար.՝ էջ 2

ԲԱՆՈՒՄՆԵՐ ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅԱՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷԶ



Պաղեստինցի երիտասարդներ շէյխուի մէջ կը քարկոծեն իսրայէլացի զինուորներ

Իսրայէլեան պատերազմական ուղղաթիւներ երբեք հրքիւններ արձակեցին Կազայի մէջ շէյխուի մը վրայ, ուր սպանցեցին պաղեստինցի մը, յայտնեցին ակաւտները: Սպանուած պաղեստինցիին 35ամեայ Մուսաֆա Սապահն է, որ ըստ ակաւտներէն, որուն, պաղեստինեան իշխանութեան կեդրոնատեղիին պահակներէն էր: Անոնք ակաւտները սակայն, որ ան նաեւ կը պատկանի շարժումի մը, որ պատասխանատու է Կազայի մէջ իսրայէլեան ուժերուն դէմ կատարուող յարձակումներուն:

Բախումները երէկ շարունակուեցան նաեւ Այսրյորդանացի մէջ: շէյխուի մօտ, իսրայէլացի զինուորներ սպանցեցին երկու պաղեստինցիներ, որոնք քայքայէ մը կրակ կը բացային զինուորներուն վրայ: Անոնք իսլամական ժիհատի անդամ էին: Իսրայէլեան ուժերը գտնելով անոնց բաքստոցը ուզած էին գանոնք ձերբակալել, սակայն պաղեստինցիները կրակ բացած էին անոնց վրայ, յայտնեց բանակը: Պաղեստինեան արքիւրներու համաձայն, զինուորները ուժեղացան իսրայէլեան շարժումի վերջը: Միւս կողմէ, պաղեստինցի իսրայէլեան տագնապը աւարտուի եւ արիւնահեղութեան վերջ տալու համար միջազգային ճիգերը կը շարունակուին, թէեւ անոնք ցարդ յաջողութեամբ չեն յաջողած:

Շար.՝ էջ 2

ԱԶՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԵԱՆ ԴԷՄ՝ ԱՀԱԶԱՆԳ

Հայաստանի ձարտարապետներու Միութեան տան մէջ երէկ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում մը, մասնակցութեամբ մշակութային, հասարակական կազմակերպութիւններու եւ հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներուն՝ ահազանց հնչեցնելու համար Հին Ջուլֆայի հայկական գերեզմանատան դէմ կատարուած ազգայնական վերջին բարբարոսութեան:

Նախիջեւանահայոց Ազգային Խորհուրդի նախաձեռնած այս հաւաքին մասնակցեցան Հայաստանի ձարտարապետներու Միութեան, «Հայկական ձարտարապետութիւնը Ուսումնասիրող» հասարակական կազմակերպութեան, Հայկական Յուշարձաններու Պահպանութեան Հիմնադրամի, Երկիր եւ Մշակոյթ կազմակերպութեան եւ Յուշարձաններու Պահա-

Շար.՝ էջ 9

ԵՐՈՂԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԅԱՆՁՆԱԽՈՒՄԲԷՆ ԿՈՉ՝ Ե. ՄԻՈՒԵԱՆ

Երոզպական Միութեան Բուփենհակընի վեհաժողովին նախօրեակին, Երոզպայի Հայ Դատի Յանձնախումբը իրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ կոչ ուղղեց երոզպական պետութիւններու ղեկավարներուն եւ չձգելու չտալու Թուրքիոյ պահանջներուն՝ ընթացք անոր Երոզպական Միութեան անդամակցութեան բանակցութիւններու սկսման թուականը: Յայտարարութիւնը կը յիշեցնէ, որ Թուրքիա կը մնայ Հայկական Յեղասպանութիւնը գործած եւ պայն ուրացող երկիր մը, որ նաեւ իսրայէլականութեան քաղաքականութիւնը կը վարէ Թուրքիոյ փոքրամասնութիւններուն հանդէպ, ինչպէս նաեւ կառչած կը մնայ իր որդեգրած յարձակողապետ վարքագիծին:

Երոզպայի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ, որուն շուտով պիտի սկսուին նաեւ այլ կալմակերպութիւններ, կը հաստատէ, որ հակապաշտպալականութենէն հրաժարիլ է միայն, որ կրնայ հաստատել, թէ Թուրքիա իրապարակեց ժողովրդավար երկիր է, վերջ՝ որեւէ իսրայէլականութենէ:

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն երէկ հրապարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն խստի կը դատապարտէ «Նեպի Ազիզ» սրբատեղիին դէմ գործուած ոճրային խափանարարութիւնը, գոր կը համարէ խաղաղութեան երթը կասեցնելու եւ համերաշխ գոյակցութիւնը խանգարելու փորձ մը:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ապահովական իշխանութիւններուն կոչ կ'ուղղէ՝ ամէն ճիգ թափելու, յայտնաբերելու եւ պատժելու համար ոճրագործները, ինչպէս նաեւ՝ աշխատելու, որ ձախողութեան մատուցուին համայնքային կիրքեր հրահրելու եւ ազգային միասնականութիւնը ջլատելու դաւերը:

ՈՒՂԵԳԻԾ ԱՐԱՊՈՂԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ «ԴՐՕՇԱԿ»-Ի, ԷՉ 5

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ՝ ԳԱՐԵԳԻՆ Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՎԱԽՃԱՆՄԱՆ 50ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Ժամանակակից հայոց պատմության վրայ իր ինքնորոշյալ դրոշմը դրած անձնատրուքի ներքին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Յովսեփեանց երջանկայիշատակ կաթողիկոսին վախճանման 50ամեակին առիթով, երեկ, երեկոյեան ժամը 19:30ին, կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանին «Գ. Կիլիսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ յիշատակի հանդիսութիւն մը, հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին:

Պաշտօնական անձնատրուքի ներքին եւ հոգեւորականներու, ինչպէս նաեւ հայ մշակութեան եւ հայոց պատմութեամբ հետաքրքրուողներ մեծ թիւով հայրորդներու ներկայութեամբ տեղի ունեցած յիշատակի հանդիսութեան բացումը կատարեց դպրեմանքի տեսուչ Պարթեւ վրդ. Կիլիկեան, որ խօսեցաւ եօթը տարիներ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գահին բազմած Գարեգին Ա. Յովսեփեանց կաթողիկոսին մասին՝ նշելով, որ վերջինս իր գահակալութեան առաջին օրէն անհնէն աւելի վարկ տուաւ կաթողիկոսարանի կրթական եւ մշակութային գործունէութեան:

Բացման խօսքէն ետք, ներկաները առիթը ունեցան լսելու Գարեգին Ա. կաթողիկոսի ձայնասփռուած պատգամներէն մէկը:

Գեղարուեստական բաժինով՝ ասմունքով եւ երգով ելոյթ ունեցան դպրեմանքի սաները: Առաջին դասախօսն էր Արտաւազդ արք. Թրթռեան, որ համապարփակ ձեւով ներկայացուց Գարեգին Ա. կաթողիկոսը, բազմակողմանի մտաւորականը, մշակութի գործիչը, ազգանուէր հոգեւորականը եւ իր ազգին ցաւերով ապրած մեծ հայր:

Երկրորդ դասախօսը՝ դոկտ. Սիլվիա Աճեմեան, «Գարեգին Ա. Յովսեփեանց կաթողիկոսին արուեստը» նիւթին ընդմէջէն եւ սահիկներու ընկերակցութեամբ ներկայացուց երջանկայիշատակ կաթողիկոսին դերը հայ արուեստի եւ մշակութային ուսումնասիրութեան մէջ:

Փակման խօսքը արտասանեց Արամ Ա. կաթողիկոս: Ան նախ եւ առաջ շնորհակալութիւն յայտնեց օրուան դասախօսներուն՝ հարապատ ձեւով Գարեգին Ա. Յովսեփեանցը ներկայացրելուն համար, եւ հաստատեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ երջանկայիշատակ կաթողիկոսին գործը, որ կը խտանայ ազգին, հայրենիքին, մշակութիւն եւ կրօնի ծառայութեան մէջ:

Յիշատակի հանդիսութիւնը փակուեցաւ «Կիլիկիա» քայլերգով:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԻԱԲԱՆ ՅԱՅՐԵՐՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԿՐ ԿԱՏԱՐԷ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութիւնը իր վանական ու թեմական ծառայութիւններով ներկայութիւն է մեր եկեղեցւոյ ու ժողովուրդի կեանքին մէջ: Արամ Ա. կաթողիկոս յատկապէս թեմերու կեանքէն ներս միաբան հայրերու ծառայութիւնը վերաբեւոյժելու համար, վերջին տարիներուն կարեւոր նկատեց միաբան հայրերու ծառայութեան դաշտերուն փոփոխութիւնը:

Վեհափառ հայրապետին բարձր տնօրինումով Բարգէն Ծ. վրդ. Չարեան, վեց տարիներ Սան Ֆրանսիսքոյի հայ համայնքին հոգեւոր հովուութիւն կատարելէ ետք, նշանակուեցաւ առաջնորդական փոխանորդ ձեւերէի հայոց (Սուրիա): Վրոյր վրդ. Տեմիրճեան, որ ցարդ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան հոգեւոր խորհրդատուի պաշտօնը կը վարէր, ուղարկուեցաւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմ՝ հովուական պաշտօնով: Իսկ Շահէ Ծ. վրդ. Փանոսեան, որ աւելի քան 20 տարիներէ ի վեր Ամերիկայի Արեւելեան թեմին մէջ (Մայեմի, Շիքսլո) եւ Քանադայի թեմին մէջ (Թորոնթո) կը ծառայէ իբրեւ հոգեւոր հովիւ, Նոր Տարիին պիտի վերադառնայ մայրավանք՝ իր նոր պաշտօնը ստանձնելու համար: Թորոնթոյի մէջ Վայն պիտի փոխարինէ Մեղրիկ Ծ. վրդ. Բարիքեան, որ ցարդ Թոնչնոց Բոյնի տնօրէնութեան պաշտօնը կը վարէր:

ՅՈՅՆ ՈՒՂԱՓԱՌԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԱԽԱՉԵՆՈՒԹԵԱՄ ԻՍԼԱՄ – ԶՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԿԻՕՍՈՒԹԻՒՆ

Դամասկոսի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ կեդրոնատեղիին մէջ 27-29 Նոյեմբերին տեղի ունեցաւ Լիբանանի ու Ուրդիոյ իսլամ եւ քրիստոնեայ Համայնքներու ներկայացուցիչներուն միջեւ երկխօսութեան մը: Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ պետ Իզնատիոս Դ. Հազմի պատրիարքին նախաձեռնութեամբ սոյն Համագումարը կազմակերպուած էր Անտիոքի եւ Միջին Արեւելքի Յոյն Ուղղափառ պատրիարքութեան կողմէ, որուն իրենց մասնակցութիւնը բերին քրիստոնեայ եւ իսլամ բարձրաստիճան կրօնաւորներ ու բազմաթիւ զէմբը՝ Լիբանանէն ու Սուրիայէն, որոնց շարքին՝ Սուրիոյ ու Լիբանանի միւլթիթիւներուն ներկայացուցիչները ու Սուրիոյ կրօնից նախարարը:

Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, սոյն Համագումարին իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Նաչբեան եւ Փառէն վրդ. Վարդանեան: Համագումարին գլխաւոր նիւթերն էին՝ «Միասնական համագործիք միեւնոյն անպակաս մարտահրաւերով», «Համակցութեան ամրապնդում», «Միեւնոյն հայրենիքի բազմաբարձրութիւն», «Անցեալի պատմութեան միասնական քննարկում», «Պատմութեան յիշողութեան սրբագրում», «Իսլամ-քրիստոնեայ միասնական պայքար՝ ի խնդիր երուսաղեմի ազատագրման»:

Դասախօսութիւններ ներկայացուեցան Միջին Արեւելքի Եկեղեցիներու խորհուրդի ընդհ. բարոնուղար դոկտ. Ռիատ Ժարթուրի եւ Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի իսլամ-քրիստոնեայ երկխօսութեան յանձնաժողովի պատասխանատու դոկտ. Թարէք Միթրիի կողմէ: Նիւթեր ներկայացուցին նաեւ Համալսարանի դասախօսներ ու սոյն ճիւղին մասնագիտութիւն ունեցող անձնաւորութիւններ: Տեղի ունեցան նաեւ խմբային քննարկումներ՝ տուեալ դասախօսութեանց մասին:

Համագումարը իր աւարտին հրապարակեց յայտարարութիւն մը՝ շեշտելով, որ իսլամ-քրիստոնեայ երկխօսութիւնը կենսական թարգմանուի ու ոչ թէ մնայ թուղթերու ու Համաձայնագիրներու վրայ արձանագրուած: Ցայտարարութիւնը կարեւոր կը նկատէր իրարու նկատմամբ անվերապահ ըլլալու փոխադարձ վստահութեան երեւոյթը: Ի վերջոյ Լիբանանը իբրեւ օրինակ կը տրուէր Համակցութեան ու գործակցութեան:

ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ԵԼՈՅԹՆԵՐ ԹԵՔԵԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱՅ ԽՈՐՀՈՐԴ Թեքեան Ուսանողական Թատերախումբը Կը ներկայացնէ՝ ՆԻԶԸԼԶԻ ԵՒ ՄԻՇԱՆԻ ԱՆՆԻ Երաժշտական եւ պարային թատերախումբը Բեմադրութիւն՝ ԳՐԻԳՈՐ ՏԵԿԻՐՄԵՆԵԱՆ Տեղի կ'ունենայ «3. Տեր Մելքոնեան» թատերաբաժնի մէջ: Ուրբաթ 6 եւ Շաբաթ 7 Դեկտեմբերին, ցերեկոյ՝ ժամը 8:30ին: Ցոմերը ստանալ տիւրքոթը «Ճեք»-էն եւ ներկայացման օրերը կ'ընկնէ:

Sponsors: LEBANESE CANADIAN BANK and LIBBY'S

Arabic header with logos: البيروت, الاسكندرية, القاهرة, الكويت, الرياض, الدمام, الخبر, الجبيل, الاحواز, البصرة, الموصل, السيفير

ԻՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ

Տեղական մամուլը երեկ կեդրոնացած էր բջիջային հարցին եւ անոր արձագանգներուն, իրաքի մէջ ՄԱԿի վեներու քննիչներուն կողմէ Պաղտատի մէջ քննութիւններուն եւ Պաղտատի տագնապին առնչուող իրադարձութիւններուն վրայ: «Անուար» գրած է. Բջիջայինի թատրոնին վարագոյրը իջու, իշխանութեան յաշողութեամբ: Նախարար Քրրտահի, որուն դիմաց ընտրանք չմնաց, ձգձգուի խաղը կ'որդեգրէ, իսկ երրորդ ընկերութեան քեմագրութիւնը պատրաստութեան ընթացքի մէջ է:

«Նահար»-ի համաձայն, բջիջայինի համաձայնութեան ստորագրութեան ուշացումը վարագոյրը Հարիրին մղէ Պաղտատ ալյցելելու: «Նահար» օրաթերթի հետ ունեցած իր հարցազրոյցին ընթացքին Քրրտահի ըսած է, թէ ինք իր պայմանները ունի եւ չոր. Լահուտ այս հարցին մէջ համաձայն է իրեն հետ: «Սաֆիր» գրած է, թէ բջիջայինի ընկերութիւններուն համաձայն, Քրրտահիի մատնանշումները կը հարուստեն համաձայնութիւնը: Առողջապահութեան նախարար Ֆրեմիթ ըսած է, թէ նախարարաց խորհուրդը ջնջուած է եւ թէ ինք թէկնածու է նախագահութեան:

«Լ'Օրիան Լը Տուր» նշած է, թէ Քրրտահի Չորեքշաբթի օր կը ստորագրէ, իր պայմաններուն համաձայն: «Տիար» գրած է. Ֆրանսական 500 միլիոն տոլարը կ'առնչուի «Ֆրանս Թեյեքոն»-ի հետ վեճի լուծման. ստորագրութիւնը կ'ունենայ եւ Քրրտահի կը ստանայ զօր. Լահուտի համաձայնութիւնը: Կասկածներ կը աւառնին սեփականաշնորհման հարցին վրայ եւ երրորդ ընկերութիւնը կը կարողանայ պատասխանատուներու մասնակցութեամբ: Հարիրի կը պատմայ իրադարձութիւնը, իսկ Պրրի Չորեքշաբթի օր նախագահ Լահուտի պիտի ալյցելէ՝ միջնորդութիւն կատարելու: «Քիֆահ Արապի»-ի համաձայն, Քրրտահիի ստորագրութեան հանելուկը կը շարունակուի. նախարար կը պահանջէ բարեփոխումներու, իսկ պաշտօնակրներուն լուծումը կը մնայ իբրեւ վերջին ընտանիքը: «Մուսթափա»-ի համաձայն, այս հարցին առնչութեամբ ընտանիքը նախագահի վախճանը կը շարունակէ իր օրհանգիստը: «Քիֆահ Արապի»-ի լուսարձակի տակ առած է այն իրողութիւնը, թէ Ուաշինկթըն նիւթական օժանդակութեամբ պահովեց Անգարայի մասնակցութիւնը եւ Թուրքիա իր օրհանգիստը բացաւ այս նպատակով: Պաղտատի տագնապին առնչութեամբ թերթերը գրած են, թէ ՄԱԿի անձնակազմը կը դատաւարտէ իր պայեղեան բռնութիւնները: Ըստ «Նահար»-ի, Շարուն կ'ամբաստանէ պաղտատիցիներու արարները ընտրութիւններուն ընթացքին աշխատանքականներուն նեցուկ կանգնելու յանձնարարով: «Մուսթափա»-ի համաձայն, իրապիւստիցի նախարար մը կ'ընկուղղէ Միսայի մէջ պաղտատի տագնապը: Պաղտատ իր տեղեկագիրը կը ներկայացնէ:

LOSI ԵՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՈՒԹԵԱՆ ԳԵՏԻՐԱԿԱՆ ԶԱՆՆԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 10 Դեկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:30ին, ԼՕՍԻ «Արաքսի Պուլ»-ը կ'ընկերաբեռնական կեդրոն՝ «ԹՃՈՒԿ-ԵԱՆ» սրահին մէջ: Նիւթ ԻՆՉՊԻՍ ԴԻՄԱԳՐԱԿԵԼ ՆԵՐԿԱՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՉՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱՆԱԻԱՆԴ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒՆ Դասախօս՝ ԱԼԻՆ ԳԵՈՐԳԵԱՆ Յարդարում՝ ԷԼՕ ՍԵԼԸՆԵԱՆ

ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել մեր սիրելի ժողովուրդին, թէ յառաջիկայ Կիրակի, 8 Դեկտեմբեր 2002ին, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի քահանայական ձեռնադրութիւն եւ օծում: ԲԱՐԵՇ ՍԱՀԱԿ ՍՐԿ. ՊԱՍԻԼԵԱՆԻ (Քահանայացու Ատրպատականի թեմին) Ձեռնադրութիւնը պիտի կատարէ եւ քարոզէ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (ԱՌԱՋՆՈՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՅՈՑ ԹԵՍԻ) Սկիզբ ժամերգութեան Ձեռնադրութիւն ժամը 9:30ին ժամը 10:00ին Սիրով կը իրաւորեն մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդը ներկայ ըլլալու հոգեւորաբար արարողութեան, քաջալերելու եւ գօտեպնդելու համար երիտասարդ ընծայեալը: Կոչման արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 7 Դեկտեմբեր 2002, կեսօրը ետք ժամը 4:00ին, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ: ԴԻՄԱՆ ԱՉԱՅԻՆ ԱՆՈՒՆՈՐԴԱՐՆԻ

ԸԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶՈՒԷՃ Նախագահութեամբ՝ Լիբանանի Հանրապետութեան Առաջին Տիկնոջ ՏԻԿԻՆ ԱՆՏՐԷ ԼԱՇՈՒՏԻ ԸԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶՈՒԷՃԻ 80ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԵՐԳԱՀԱՆԴԵՍ Սեցցօ - սփորանօ ԼԵՆԱ ՔԻՐՔԵՃԵԱՆԻ Դաշնակի ընկերակցութեամբ ԷՎԱ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆԻ ԵՒ «ԱՐՄԻՍ» երգչախումբի 3այտագիրի վրայ ե՛՛ Ռոմանոս Մելիքեանի, Շուսանի, Պրամզի, Ալեմշահի, Բարսեղ Կանաչեանի եւ Սեն-Սանսի երգերը Շաբաթ, 7 Դեկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էսենսիալ հոլ»-ին մէջ: Ցոմերու վաճառման կեդրոններ՝ Դպրոցի գրասենեակ, հեռ. 01 - 349816 - «Գարին» հաստ. Պուրճ Լամուտ, հեռ. 01 - 266414 - «Սիթի Սթրիթ»-ը, Չալբա, հեռ. 01 - 898104 - «Չելսի», Լամրա, 01 - 349389 - «Կիլիկիա» ղեղարան, Մար Սըխայէլ, հեռ. 01 - 442668 - 581539 - Առաւել - երգահանդէսին օրը՝ կիշէն: Սրահին դռները պիտի փակուին ժամը ճիշդ 8:30ին:



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 3աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԿԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՅԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ




2002Ի ԼԱՒԱԳՈՅՆ ԿԱՅՔԵՐԸ

Ստորև կը ներկայացնենք այլազան բեմաներու յատկացուած համացանցի կայքեր, որոնք 2002ին վայելցին մեծ ժողովրդական սեփականութիւն: Անոնցմէ ոմանք վերջին տարիներուն տեւաբար եղած են «յաւազոյն կայքեր»ու ցանկին վրայ, իսկ ուրիշներ նորակներ են, որոնք նոր աւելցնելու են համացանցի տիեզերքին:

● www.bbc.co.uk - «Միլիոն էջերու կայքը» անվիճելիորէն համացանցի վրայ լրատուութիւններ ներկայացնող եւ համայնագիտարանային բնոյթի տեղեկութիւններ հրատարակող կայքերուն մէջ կը գրաւէ իր առանձնատուր տեղը: Աւելին՝ կայքը պատրաստողները յաջողած են բազմամիլիոն գրութիւններ, երաժշտական ֆայլեր, լուսանկարներ եւ կայքեր դասակարգել գեղեցիկ ձեւաւորումով եւ արդիական արհեստագիտութեան բարեփոխումով իրօքն ոգտագործել այս կայքին մէջ:

«Պի. Պի. Սի.» կայքը կ'ընդգրկէ «գրեթէ ամէն բան», որ բերելէ կրնայ հետաքրքրել մարդ արարածը:

● www.amazon.com
Համացանցի միջոցով գիրքերու, էլեկտրոնային սարքերու եւ բազմաթիւ այլ իրերու վաճառքի այս հսկան անմրցելի է: Այցելուներու եւ գնորդներու վստահութիւնը շահած այս կայքը անզուգական է իր վաճառքի դրուած իրերու բազմազանութեամբ: Գիրքերու բաժինին մէջ վաճառքի դրուած տարբեր լեզուներով գիրքերու թիւը կը հասնի մէկուկէս միլիոնի:



● www.yahoo.com
Համապարփակութեան այլ «չնչող» օրինակ մը: «Ես հիմա» միջոցով կարելի է - նամակի հասցէ ունենալ, համացանցի կայքեր կառուցել, փնտրուողներ կատարել, անոր ենթաբաժիններէն ընտրել ցանկացած թեմա մը եւ ծանօթանալ «Ես հիմա» ընտրելու կայքերուն, լուրեր կարդալ, համացանցի միջոցով գրուել, եւ այլն:

«Ես հիմա» ամսական 112 միլիոն այցելուներ կ'ունենայ: Բան մը, որ կայքը կը ղնէ աշխարհի ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող կայքերու դասաւորման պարագլուխի դիրքին վրայ:

● www.ft.com
Առեւտուրի, դրամի, տնտեսութիւններու, եւեւմուտքի, դրամատնային հարցերու, բաժնետնտեսութեան այլ թեմաներու համար իտեղական կայքը՝ իր լուրերով, վերլուծումներով, թիւերով եւ տուեալներով:


● www.imdb.com
Ֆիլմերու եւ սինեմայի աշխարհին մասին տեղեկութիւններ, լուրեր, ուսումնասիրութիւններ ներկայացնող այս կայքը ինքզինք հաստատած է իրեն եօթներորդ արուեստի անկրկնելի բաները համացանցին վրայ:

● www.nationalgeographic.com
Անասուններու, բնութեան եւ գիտութեան մասին խիստ հետաքրքրական եւ շահեկան տեղեկութիւններ եւ լուրեր՝ այս կայքը կը դարձնեն դաստիարակչական գերկարեւոր վայր մը:

● www.cnn.com
Իր «խճողուած» ձեւաւորման համար յաճախ քննադատուող «Սի. Էն. Էն.» կայքը յամենայնդէպս կը յաջողի լուր վարկեանք վարկեանքին փոխանցել համացանցը ոգտագործողին:

Ստորև կը ներկայացնենք աշխարհի ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող 10 կայքերու հասցէները եւ ամսական անցնող ստացած այցելութիւններուն թիւը:

- 1.- «Ես հիմա» (www.yahoo.com) 112 միլիոն
- 2.- «Էմ. Էս. Էն.» (www.msn.com) 101 միլիոն
- 3.- «Էյ. Օ. Էլ.» (www.aol.com) 91 միլիոն
- 4.- «Մայքրոսոֆթ» (www.microsoft.com) 83 միլիոն
- 5.- «Կուկլըյ» (www.google.com) 55 միլիոն
- 6.- «Լայքոս» (www.lycos.com) 50 միլիոն
- 7.- «Ամազոն» (www.amazon.com) 37 միլիոն
- 8.- «Իպէյ» (www.ebay.com) 35 միլիոն
- 9.- «Ըպաուլթ Փրայմթիմ» (www.aboutprimedia.com) 30 միլիոն
- 10.- «Կատոր Գորփորէյշըն» (www.gator.com) 20 միլիոն



հասկնալի եզրն անգամ:

● www.football365.com
Աշխարհի ամէնէն աւելի ժողովրդականութիւն ունեցող մարզախաղի ամէնէն աւելի ժողովրդականութիւն ունեցող կայքը: Տուեալի հետ առնչուող լրատուութիւններ, թիւեր, տուեալներ, հարցազրոյցներ եւ բաժնասանք մաս կը կազմեն կայքին օրական քանիցս վերաթարմացուող նիւթերուն:


● www.hotmail.com
Համացանցի վրայ - նամակի հասցէ ունենալու համար ամէնէն աւելի «յաճախուող» կայքը: Հակառակ - նամակի ծառայութիւններ տրամադրող բազմաթիւ ընկերութիւններու ստեղծումին, «Հոթմէյլ» տակաւին գլխաւոր ընտրանքն է բազմամիլիոն համացանցը ոգտագործողներուն:

● www.about.com
Համայնագիտարանային ծաւալով եւ պարունակութեամբ այլ կայք մը, որ կը յազգեցնէ որեւէ թեմայի շուրջ տեղեկութիւն փնտրողին պապակը:

● www.dictionary.com
Բառարաններու ընդարձակ աշխարհ մը՝ համացանցին վրայ:

● www.tweaxp.com
«Ուիքսոնը Էքս. Փի.» դրութիւնը լաւագոյնս ոգտագործելու համար այս կայքին այցելութիւն մը տալը խիստ փափաքելի է:

● www.theonion.com
Լրատուութիւններու եւ քաղաքականութեան աշխարհը հեղեղական ակնոցով դիտող այս կայքը «տեսարան» է:



● www.google.com
Յունիս 2000ին «Կուկլըյ» կը դառնայ համացանցին վրայ գտնուող փնտրուողի մեծագոյն համակարգը՝ հասողութիւն ունենալով մէկ միլիոն կայքերու: «Ես հիմա» ընկերութիւնը (www.yahoo.com) կ'ընտրէ «Կուկլըյ» իր բերել իր կայքի փնտրուողի համակարգը:


2001ի Մայիսին «Կուկլըյ» կը հրապարակէ իր կայքի հասցէները, ինչպէս՝ www.google.co.uk,

«ԿՈՒԿԸԼ»ԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր զարգացման հարցում մը. տուէք հասցէն այն վայրին, որ ամիսը 55,6 միլիոն այցելուներ կ'ունենայ: Բնականաբար պատասխանը ո՛չ «Լուկը» թանգարանն է, ո՛չ Չինաստանի պատր, ոչ ալ պատասխան թէ արդի որեւէ այլ կառոյց, այլ՝ համացանցի «Կուկլը» կայքը:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Փնտրուողի այս գերհզոր համակարգը պատրաստութեան ընթացքի մէջ մտած է 1995ի Դեկտեմբերին, «Սթէյնֆորտ» համալսարանի մէջ «Փի. Էյ. Տի.» թեկնածու երկու ուսանողներու կողմէ՝ Սերկէյ Բրին եւ Լէրի Փէյճ: Աշխատանքները կը շարունակուին յաջորդող տարիներուն 2 ուղղութեամբ՝ փնտրուողի



www.google.fr, եւ այլն, որոնք Գերմանիոյ, Ֆրանսայի, Անգլիոյ, Իտալիոյ, Ճապոնի կամ այլ երկիրներու կայքերուն վրայ «կը կեդրոնանան» փնտրուողի ընթացքին:

Դեկտեմբեր 2001ի տուեալներով, «Կուկլը» հասողութիւն կ'ունենայ

թեր փնտրուող գոհացուցիչ դրութեան մը զարգացումին: 1996ի սկիզբները անոնք արդէն պատրաստած էին «Կուկլը»ի նախահարցը՝ «Պէքթրայ», որ կարողութիւն ունէր հսկայական ծաւալով տեղեկութիւններու մէջէն «ընտրել» տուեալ թեմայի մը շուրջ տեղեկութիւններ:

Երկու ուսանողները այս արհեստագիտութիւնը հետագային առաւել եւս զարգացուցին եւ զայն «վերամկրտեցին» «Կուկլը», որ մեծ թիւի մը անունն է (մէկ եւ հարիւր գերո):

Յաջորդող տարիներուն «Կուկլը» իր կատարած նուաճումներով շնորհիւ շուրջ 3 միլիոն «թղթածրարներու»:

Մայիս 2002ին «Կուկլը» համաձայնութիւն մը կը գոյացնէ «Էյ. Օ. Էլ.» հետ, որուն հիմամբ «Կուկլը» փնտրուողի ծառայութիւններ պիտի տրամադրէ «Էյ. Օ. Էլ.» ի 34 միլիոն բաժնորդներուն:

2002ի Սեպտեմբերին «Կուկլը» լուրերու բաժին մը կը ստեղծէ իր կայքին մէջ եւ կ'որոգեզէ մեծուցումներէ հասոյթ պապակելու նորանոր միջոցաւորումներ:

«ԿՈՒԿԸԼ»Ի ՄԱՐՏԱՎՐԱԲԵՐԸ

Համակարգչագէտներ Սերկէյ Փրին եւ Լէրի Փէյճ իրենց ուսերուն վրայ առած էին համակարգչային պատմութեան մեծագոյն մարտահրաւերներն մէկը՝ երբ նախաձեռնեցին համացանցին վրայ:

Եւ մինչ «Կուկլը» մէկ աչքը բաց կը քնանայ, համացանցը ոգտագործողը կրնայ «աչքերը թեան մեծագոյն մարտահրաւերներն մէկը լուծել, երբ նախաձեռնեցին համացանցին վրայ:

Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

Տոլմախարութեամբ՝ ԿՐՈԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՄԱՆՆԵՐ ԱՊՏԵԼ ՈԱՇԽՄ ՍՈՐԱՏԻ

ՎԱՐԱՆ ԹԵՔԵՏԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՍԱՐՍԻՆԸ

264 կը հրաւիրուի ՎԱՐՄԱՐԱՆԻ

50 ԱՄԵՆԱԿԻ ՀՎԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 8 Դեկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 7:00ին, «Յովհաննէս Պողոսեան» հանրապարտապահ մէջ, Պուրճ Համուտ:

ԳՐԱԽՐ

Մանկապատանեկան

ՔԻՉ ՄԸ ՕԴ ՇՆՉԵՆՔ

Ի՞նչ կ'ընեն դուև օրուամ մեջ 20,000 անգամ, առանց մտածելու: Շնչել. անհրաժեշտ... կենսական բան մը:

Ի՞նչի կը ծառայէ
Շնչելը ծնած պահուէր կատարած առաջին գործողութիւնը է: Այդ վարկեանէն սկսեալ, ամէն անգամ երբ կը շնչես, կ'առնես օդին թթուածինը եւ կ'արտաքսես բնածխական կազ: Թթուածինը թոքերէդ կ'անցնի արիւնիդ մէջ, որ իր կարգին զայն կը հասցնէ մարմնիդ գործարաններուն: Այս արժէքաւոր կազը բոլոր բջիջներուդ կարելիութիւնը կու տայ գործելու: Շնչելը կը ծառայէ նաեւ դուրս հանելու բնածխական կազը, աղտոտ աւելցուէր մը, գոր գործարաններդ կ'արտադրեն աշխատելու ժամանակ:

Հսկէ՛ շնչառութեանդ
Դժբախտաբար քու շնչած օդը միշտ մաքուր չէ: Ան ապականած է ինքնաշարժներուն եւ այլ մեքենաներու կազերով, իսկ տունէն ներս՝ ծխախոտին պատճառով: Այս ծուխերը կը պարունակեն, այլ կազերու կողքին, բնածխական կազ: Այս անբերելոյթ եւ անհոտ կազը թթուածինէն 200 անգամ աւելի լաւ կը հաստատուի արեանդ կարմիր գնդիկներուն մէջ: Այս թունաւորումը գլխու ցաւեր կու տայ: Հետեւաբար ուշադրութիւն ըրէ, խճողումի մէջ հեծիկ քշելը շատ լաւ գաղափար մը չէ:

Օդի հոսանք
Շնչած օդը կը հասնի առաձգական պոտիկ տոպրակներու՝ թոքային խորշերուն, որոնք կապի մէջ են արեան շտապարակ երակներուն հետ: Անոնց պատկերը այնքան բարակ են, որ օդին թթուածինը կրնայ անցնիլ արեան մէջ: Թթուածինը կը տեղափոխուի կարմիր գնդիկներուն միջոցով եւ պաշար կը բերէ գործարաններուդ: մինչ արեանդ մէջ գոյուլթիւն ունեցող բնածխական կազը կ'անցնի օդին մէջ, որ թոքերէն դուրս պիտի ելլէ:


- Գիտե՞իր, քե...
 - Օդը կը պարունակէ 75 առ հարիւր բորակածին (ազոթ), 20 առ հարիւր թթուածին եւ քանի մը հազարապիստ կազեր:
 - Կրնաս քանի մը օր առանց ուտելու մնալ, քանի մը ժամ՝ առանց խմելու... Սակայն ոչ աւելի քան երկու վայրկեան՝ առանց շնչելու:
 - Նորածինը կը շնչէ 40 - 80 անգամ մէկ վայրկեանի ընթացքին, 5 տարեկան փոքրիկ մը՝ 25 անգամ, իսկ չափահասը՝ 15 անգամ:
 - Տիպիկական ճիգի մը ընթացքին մկաններդ շատ կ'աշխատին, շնչառութիւնդ կ'արագանայ անոնց աւելի թթուածին հայթայթելու համար:
 - Ստոծանին շնչառութեան գլխաւոր մկանն է:
 - Իւրաքանչիւր թոքի մէջ գոյուլթիւն ունին 300 միլիոն խորշեր:
 - Փոքր անասունները աւելի արագ կը շնչեն, քան մեծերը:
